## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ


Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am


# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2024թ. N 794-Ա

## ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետերի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ ***որոշում եմ.***

1.2024 թվականի նոյեմբերի 04-ից մինչև 18-ը ներառյալ Բյուրեղավան համայնքում կազմակերպել հանրային քննարկումներ Բյուրեղավան համայնքի ավագանու «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական տուրքերի 2025 թվականի տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին», «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքում տեղական վճարների 2025 թվականի տեսակները, դրույքաչափերն ու արտոնությունները և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների 2025 թվականի դրույքաչափերը սահմանելու մասին» և «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի վարչական տարածքում աղբահանության վճարի 2025 թվականի դրույքաչափերը, հաշվարկման մեթոդները և արտոնությունները սահմանելու մասին» նորմատիվ որոշումների նախագծերի վերաբերյալ:

2.Հանրային քննարկումները կատարվելու են Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքի միջոցով՝ http://byureghavan-kotayk.am/:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALAYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՅԱՆ

2024թ. նոյեմբերի 04
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 նոյեմբերի 2024թ. N 795-Ա

### ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 15-Ն որոշմամբ հաստատված կարգը՝ ***որոշում եմ.***

1.2024 թվականի նոյեմբերի 5-ից մինչև 20-ը ներառյալ Բյուրեղավան համայնքում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի «Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի մանկապարտեզի բակի բարեկարգում» սուբվենցիայի ծրագրի հանրային քննարկումներ:

2.Հանրային քննարկումները կատարվելու են Բյուրեղավանի համայնքապետարանի պաշտոնական համացանցային կայքի միջոցով՝ http://byureghavan-kotayk.am/:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ    Signed by: BALASYAN HAKOB 3009590148    Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 04
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2024թ. N 796-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՂԻՆԱԿ ՄԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՁԵՎՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 57-րդ և 66-րդ հոդվածների, «Քաղաքաշինության մասին» օրենքի $14^{3}$-րդ և 30-րդ հոդվածների, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի և 4-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 51-րդ կետի, 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Ն որոշման, 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33.1-րդ, 34-րդ և 34.2-րդ կետերի, 35-րդ կետի «գ» և «ե» ենթակետերի ու հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի մարտի 12-ի N 19-Ա որոշումը, N 01112024-07-0185 սեփականության վկայականը, Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 1-ին շարք 29 տուն հասցեի բնակիչ Վաղինակ Արամի Մարդանյանի 2024 թվականի հոկտեմբերի 04-ի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամասի 1-ին փողոց 59/1 հասցեում գտնվող բնակավայրերի նպատակային նշանակության 74.95 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը 295153.1 (երկու հարյուր իննսունհինգ հազար հարյուր հիսուներեք ամբողջ մեկ տասնորդական) դրամով, 21.05 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը 82894,9 (ութսուներկու հազար ութ հարյուր իննսունչորս ամբողջ ինը տասնորդական) դրամով, 0.94 և 4.11 քմ մակերեսներով պարիսպները 9943,45 (ինը հազար ինը հարյուր քառասուներեք ամբողջ քառասունհինգ հարյուրերորդական) դրամով և դրանց զբաղեցրած 0.049229 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման (ծածկագիր՝ 07-003-0040-1081) հողամասը 2186653,722 (երկու միլիոն հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր հիսուներեք ամբողջ յոթ հարյուր քսաներկու հազարերորդական)

դրամով ուղղակի վաճառքի ձևով օտարել կառույցն իրականացրած Վաղինակ Արամի Մարդանյանին (ծնված՝ 1955 թվականի հուլիսի 20-ին):

2.Սույն որոշման 1-ին կետում նշված գույքը դուրս գրել Բյուրեղավան համայնքի հաշվեկշռից:

3.Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված գույքերի առուվաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Վաղինակ Արամի Մարդանյանի կողմից:

4.Վաղինակ Արամի Մարդանյանը պարտավոր է Բյուրեղավանի համայնքապետարանի 900105202064 հաշվեհամարին վճարել 5000 (հինգ հազար) դրամ՝ հասցեի տրամադրման համար ծառայության վճար:

5.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Սարգիս Ժորայի Ղազարյանին (անձնագիր՝ AV 0661399, տրված՝ 2023 թվականի մարտի 03-ին 059-ի կողմից, ծնված՝ 1980 թվականի հոկտեմբերի 12-ին)՝ կատարել Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամասի 1-ին փողոց 59/1 հասցեում գտնվող 74.95 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը, 21.05 քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը, 0.94 և 4.11 քմ մակերեսներով պարիսպները և դրանց զբաղեցրած 0.049229 հեկտար մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի ձևով Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սարալանջ թաղամաս 1-ին շարք 29 տան բնակիչ Վաղինակ Արամի Մարդանյանին օտարելու հետ կապված գործարքներ և կնքել առուվաճառքի պայմանագիր:

6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 05
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024թ. N 797-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2024 թվականի նոյեմբերի 05-ի N 01/05/07631-2024 գրությունը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 04-Ա որոշման N1 հավելվածի 2-րդ բաժնի 2.1-րդ կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ «ծդ$^{1}$»-րդ ենթակետով.

«ծդ$^{1}$) անհրաժեշտության դեպքում ստուգում է համայնքային ծառայության, համայնքային հայեցողական և համայնքային վարչական պաշտոնների հավակնող անձանց բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթղթի իսկությունը՝ կրթության ոլորտի պետական լիազոր մարմին պաշտոնական հարցում կատարելու միջոցով.»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2024թ. N 798-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 11 ՇԵՆՔԻ ԹԻՎ 10 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Սաղաթել Կոլյայի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Սաղաթել Կոլյայի Հարությունյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 11 շենքի թիվ 10 բնակարանի (վկայական 0167292, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 11 շենք 10 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024թ. N 799-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1996 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N 24 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Ռիտա Համբարի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի քաղաքային խորհրդի գործադիր կոմիտեի 1996 թվականի մայիսի 13-ի «Բնակարանը սեփականաշնորհելու մասին» N 24 որոշման 4-րդ կետի «ա» ենթակետում «Համբարձումի» բառը փոխարինել «Համբարի» բառով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2024թ. N 800-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 24 ՇԵՆՔԻ 25 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Ռիտա Համբարի Հարությունյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 24 շենքի N 25 բնակարանի (վկայական 0167788, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 24 շենք 25 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009690148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024թ. N 801-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի N 79-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2024 թվականի նոյեմբերի 05-ի N 16/24 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.2024 թվականի համար «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ Արմինե Նորայրի Մարգարյանի (ծնված՝ 2010 թվականի դեկտեմբերի 02-ին) համար կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ սկսած 2024 թվականի նոյեմբերի 01-ից:

2.«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝
1) ապահովել կիրառված արտոնության կատարումը,
2)արտոնությունից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

06 նոյեմբերի 2024թ. N 802-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Վանիկ Վլադիմիրի Պրազյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Վանիկ Վլադիմիրի Պրազյանին ժառանգության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ Նուռնուսի այգեգործական զանգված թիվ 399 անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0124-0087) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք-1 թաղամաս 30:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ հասցեի գրանցում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2024թ. N 803-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Արմեն Աշոտի Ջումայանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Արմեն Աշոտի Ջումայանին պատկանող Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Նուռնուս գյուղում գտնվող անշարժ գույքին (կադաստրային ծածկագիր՝ 07-051-0005-0005) տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս 7-րդ փողոց 28:

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamayngapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 նոյեմբերի 2024թ. N 804-Ա

## ՀՐԱՀԱՏ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Հրահատ Եղշիբեկի Արզումանյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հրահատ Եղշիբեկի Արզումանյանի (ծնված՝ 1960 թվականի հունվարի 05-ին) կողմից Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի 48 շենքի հարևանությամբ գտնվող Բյուրեղավան համայնքի սեփականությունը հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության 0.00008 հեկտար մակերեսով հասարակական կառուցապատման և 0.00175 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասերում (չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիր՝ 2023ACVSY9) ինքնակամ կառուցված 14.4 քմ ներքին (16.7 քմ արտաքին) մակերեսով ավտոտնակը համարել Բյուրեղավան համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական:

2. Ավտոտնակին և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Կոտայքի փողոց 48/4:

3.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Կոտայքի փողոց 48/4 հասցեի 0.00008 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի (ծածկագիր՝ 07-003-0025-ից) գործառնական նշանակությունը փոխել՝ դարձնելով բնակելի կառուցապատման:

4. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված՝

1) ավտոտնակի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

2) ավտոտնակը կառուցված չէ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

3) ավտոտնակը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

5.Հաստատել սույն որոշման 1-ին կետում նշված օրինական ճանաչված ավտոտնակի և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագիծը (կցվում է):

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 06
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

07 նոյեմբերի 2024թ. N 805-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ԱՎԱՆԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵԻ 1991 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի 5.1-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Բախշի Սերոբի Գևորգյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի ավանային խորհրդի գործադիր կոմիտեի 1991 թվականի դեկտեմբերի 13-ի որոշման 1-ին կետը «/ինքը, տղան/» բառերից հետո լրացնել
«՝ Սերոբ Համբարձումի Գևորգյանին, ծնված՝ 1929 թվականի մարտի 01-ին,
Բախշի Սերոբի Գևորգյանին, ծնված՝ 1965 թվականի դեկտեմբերի 21-ին,» բառերով և թվերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 07
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamayngapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

08 նոյեմբերի 2024թ. N 806-Ա

## ՆԻՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԻՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆԻՑ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ԴԱՍԱՅԻՆ ԱՍՏԻՃԱՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի 1-ին ենթակետի, 2-րդ և 3.1-րդ մասերի՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ (պաշտոնի ծածկագիր՝ 2.1-2) Նինա Արամի Մարկոսյանին շնորհել իր զբաղեցրած պաշտոնին համապատասխանող համայնքային ծառայության դասային աստիճանից ավելի բարձր՝ Հայաստանի Հանրապետության համայնքային ծառայության 3-րդ դասի խորհրդականի դասային աստիճան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

08 նոյեմբերի 2024թ. N 807-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՀԱՄԱՅՆՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 24 ՇԵՆՔ ԹԻՎ 47 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Գարիկ Յուրիի Իսկանդարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան 24 շենք թիվ 47 բնակարանի (վկայական՝ 17102024-07-0003) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Սամվել Վարդանյան փողոց 24 շենք 47 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 08
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

08 նոյեմբերի 2024թ. N 808-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ ՔԱՂԱՔ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ 26 ՇԵՆՔԻ ԹԻՎ 30 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 55-րդ, 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով Սերգեյ Բորիսի Դալլաքյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Կոտայքի մարզ քաղաք Բյուրեղավան 26 շենքի թիվ 30 բնակարանի (վկայական 0200323, տրված 2000 թվականի դեկտեմբերի 22-ին) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Վազգեն Սարգսյան փողոց 26 շենք 30 բնակարան:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորում կատարելու համար:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 08
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamayngapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2024թ. N 809-Ա

### ՆՎԵՐ ՉԵՐՔԵԶՅԱՆԻՆ ԵՎ ԱՐՄԻՆԵ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՇԻՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշման և հիմք ընդունելով Նվեր Աշոտի Չերքեզյանի և Արմինե Աղասիի Սարիբեկյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Փոփոխել Նվեր Աշոտի Չերքեզյանին և Արմինե Աղասիի Սարիբեկյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Օղակաձև փողոց 2 հասցեում գտնվող 07-003-0013-0137 կադաստրային ծածկագրով հողամասում կառուցված բոյլերակայանի գործառնական նշանակությունը՝ դարձնելով հասարակական (հանդիսությունների սրահ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 08
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ՝ hamaynqapetaran@byureghavan.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

08 նոյեմբերի 2024թ. N 810-Ա

## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՂ ՄԱՍԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 33-րդ, 50-րդ, 51-րդ և 55-րդ կետերի ու հիմք ընդունելով Ավետիք Գառնիկի Ասոյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Ավետիք Գառնիկի Ասոյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 42 շենք 28 բնակարանի (վկայական N 19092018-07-0038, կադաստրային ծածկագիր՝ 07-003-0037-0101-068-028) բաժանվող մասերին տրամադրել հասցեներ՝

1) 17.8 քառակուսի մետր մակերեսով առանձնացվող շինություն 1-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 42 շենք 28.

2) 13.0 քառակուսի մետր մակերեսով առանձնացվող շինություն 2-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 42 շենք 28/1.

3) 2.5 քառակուսի մետր մակերեսով առանձնացվող շինություն 3-ին՝
Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 42 շենք 28/2.

2. Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեների գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2024թ. նոյեմբերի 08

ք. Բյուրեղավան